9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրը ներառում է տարբեր տեսակի խորհրդատվական, դիզայնի, փորձագիտական, չափագրման և նմանատիպ այլ միջոցառումներ, որոնք միտված են բացահայտելու Գյումրու հին թատրոնի շենքի համապատասխանությունը Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ծրագրի իրականացման առումով: Ծրագրի իրականացման

2

	համար անհրաժեշտ է 15300000 դրամ: Ծրագիրը իրականացվելու է մեկ փուլով մինչև 2015թ-ի դեկտեմբերի 31-ը:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	• շենքի դիզայնի խորհրդատվության ձեռք բերում արտերկրից մինչև 2015թ-ի դեկտեմբերի 31-ը՝ 2400000 դրամի շրջանակում, • շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ խորհրդատվության ձեռք բերում մինչև 2015թ-ի դեկտեմբերի 31-ը՝ 4200000 դրամի շրջանակում, • փորձագիտական, չափագրման և այլ նմանատիպ աշխատանքների ձեռք բերում ՀՀ-ից մինչև 2015թ-ի դեկտեմբերի 31-ը՝ 2400000 դրամի շրջանակում, • շենքի շինարարական ծավալների վերաբերյալ խորհրդատվության ձեռք բերում արտերկրից մինչև 2015թ-ի դեկտեմբերի 31-ը՝ 6 300 000 դրամի շրջանակում:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	• Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը անհրաժեշտության դեպքում կարող է համագործակցել Գյումրու քաղաքապետարանի հետ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

Կազմեց՝ Արամ Նարինյան

19-02





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2015 թվականի N Մ-147-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 1


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 20-ի N 07/80-2/3661-15 և փետրվարի 17-ի N 06/18-4/3154-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի փետրվարի 18-ի N ԱՄ/22.2/1612-15 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Direct Relief» միջազգային կազմակերպության կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված ներարկիչների (545 տեղ, 5,883.82 կգ ընդհանուր քաշով, 110,607.75 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,375 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2015 թվականի N Մ-148-Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՀՈՒԿԱՅԻՆ ՄՊՈՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱ-
ԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾ-
ՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի փետրվարի 17-ի N 07/80-2/3132-15 և փետրվարի 17-ի N 06/5-1/3152-15 ու
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015
թվականի փետրվարի 12-ի N 1/06/170-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Դահուկային սպորտի միջազգային ֆեդերացիայի կողմից
որպես օժանդակություն «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական
կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (5 տեղ, 95 կգ ընդհանուր քաշով,
2,256.20 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,555
ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:


2. «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպու-
թյանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա
ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-
գործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվու-
թյուն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2015 թվականի N Մ-149-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի փետրվարի 17-ի N 07/80-2/3128-15 և փետրվարի 17-ի N 06/3-3/3153-15 եզրա-
կացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի
ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական
ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական
բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի
մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի
28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի
N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա և 2015 թվականի հուն-
վարի 30-ի N Մ-040-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման
հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էներսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00259573) 2015 թվականի հունվարի 26-ին կնքված՝
N FG-01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դիզելային գեներա-
տորի ձեռքբերում՝ 4,063,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2015 թվականի N Մ-150-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի փետրվարի 18-ի N 07/80-2/3363-15 և փետրվարի 17-ի N 06/3-3/3256-15 եզրա-
կացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի 2015 թվա-
կանի փետրվարի 19-ի N 016 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսու-
թյունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականա-
ցում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի
N Մ-073-Ա և դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրակա-
նացման հետև և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արսույուտ սաունդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02596037) 2015 թվականի փետրվարի 4-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական
սարքավորումների և մասերի ձեռքբերում՝ 16,239,360 դրամի չափով, առանց ավելացված
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 փետրվարի 2015 թվականի N Մ-151-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի փետրվարի 18-ի N 07/80-2/3366-15 և փետրվարի 12-ի N 06/3-3/2748-15 եզրա-
կացությունները, որոշում է:*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնա-դրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռայվերտի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02571725) 2015 թվականի փետրվարի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մեխանիկական վարա-գույրների ձեռքբերում՝ 1,228,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րության:

ՆԱԽԱԳԻՏ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2015 թվականի N Մ-152-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի փետրվարի 18-ի N 07/80-2/3364-15 և փետրվարի 16-ի N 06/3-3/2991-15 եզրա-
կացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնա-
դրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին»
N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

ՌԴ քաղաքացի Ալեքսանդր Կուզնեցովի հետ (անձնագիր՝ 64 7156666) 2015 թվա-
կանի հունվարի 12-ին կնքված՝ N 01-12.01.15 պայմանագրում նշված գործարքը, որով նախա-
տեսվում է կինոմատոգրաֆիայի արվեստի դասընթացների վարման ծառայությունների
մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**25 փետրվարի 2015 թվականի N Մ-153-Ա
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի փետրվարի 20-ին)
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2015 թվականի փետրվարի 24-ի N 07/80-2/4023-15 և փետրվարի 12-ի N 06/3-3/2749-15 եզրա-
կացությունները, որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգոր-
ծական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող
«Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում»
ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշման մեջ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա,
սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի
մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա և 2015
թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ
փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «3,632,200,000 դրամ» բառերը փոխարինել «4,132,200,000
դրամ» բառերով.


2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի
ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. երևան, Մարշալ Բաղդամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-


ված է նույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2015 թվականի փետրվարի 5-ին կնքված՝
N MT/050215 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապակյա բազրիք-
ների և հայելիների պատրաստման ու տեղադրման և ներքին հարդարման աշխատանքների
իրականացումը՝ 28,829,480 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Մույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րության:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագիր



1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Մելիք Ադամյան 2/2 հասցեում 1307,51 քմ հողատարածքում կառուցել սփյուռքի համահայկական խոշորագույն կազմակերպություններից մեկի՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Երևանյան կենտրոնատեղիի և Երևան քաղաքին պատկանող ստորգետնյա ավտոկայանատեղի՝ ՀՀ կառավարության համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Ամենա սփյուռքահայ բարերարներ պարոն Պերո Սեդրակյան (հասցի՝ 191 Cedar Street, Englewood NJ 07631, ԱՄՆ) և պարոն Նազար Նազարյան (հասցի՝ 147 Demarest Avenue, Englewood, Cliffs NJ 07632, ԱՄՆ):
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղդասարյան 40, ՀՎՀՀ 00006479):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք, Մելիք Ադամյան փողոց 2/2՝ քաղաքաշինության բնագավառը:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 4,132,200,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ-ում ՀԲԸՄ-ի կողմից իրականացվող բարեգործական ծրագրերի շահառու հանդիսացող բոլոր անձիք, - ՀԲԸՄ Վիրտուալ Հայկական համալսարանն իր ծրագրավորման և դասավանդման բաժիններով, - երիտասարդական ծրագրերը, - «Բացահայտիր Հայաստան» անչափահաս սփյուռքահայ երեխաների Հայաստան այցելության և կամավոր աշխատանքի ծրագիրը, - «Անդրանիկ» սկսնակական բանակումի ամենամյա կազմակերպման ծրագիրը ՀՀ Լոռու մարզում, - սփյուռքահայերի համար նախատեսված ներգնա ամառային պրակտիկայի ծրագրերը, - Հայաստանում սկսնակական շարժման ծրագիրը, - «Ուսուցում արտասահմանում» հայագրի ուսանողների համար ծրագիրը, - ՀԲԸՄ հարյուրամյա պատմությանը և գործունեությանը նվիրված բանգարան -արխիվը, - ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության գրասենյակը: ՀՀ Երևանի քաղաքապետարան (ստորգետնյա ավտոկայանատեղի):

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է սկսել 2010 թվականի դեկտեմբերին և ավարտել 2015 թվականի նոյեմբեր ամսին:	
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները: անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով. ա) Ենթի ճարտարապետական նախագծերի (Էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2010թ. դեկտեմբեր - 2011թ. հունիս ամիսների ընթացքում) և հեղինակային վերահսկողություն (2011թ. հունիս - 2013թ. մայիս ամիսների ընթացքում) - 52,200,000 դրամ: բ) տարածքում գտնվող ենթակառուցվածքների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների և այլն) տեղափոխման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2010թ. դեկտեմբեր - 2011թ. սեպտեմբեր ամիսների ընթացքում - 65,524,826 դրամ: գ) Էլեկտրաենթակայանի շենքի կառուցման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2011թ. փետրվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում - 28,605,920 դրամ դ) Հողային աշխատանքներ և Երևան քաղաքի ստորգետնյա ավտոկայանատեղիների շինարարության աշխատանքները, որը նախատեսվում է իրականացնել մինչև 2012թ. ապրիլ ամիսը - 252,399,660 դրամ: ե) Ենթի ընդհանուր շինարարական աշխատանքները՝ ներառյալ շենքի արտաքին տեսքի վերակառգման, ջերմամեկուսիչ արտաքին ապակե պատերի կառուցում, շենքի կառավարման էլեկտրոնային համակարգ, ներքին հարդարման աշխատանքներ, կահավորումը և այլն, որոնք նախատեսվում է ավարտին հասցնել 2015 թվականի նոյեմբերին - 3,733,469,594 դրամ:	
10.	Չեղբ բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Նարեկ Մարգարյան ճարտարապետական արվեստանոց» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01550435) հետ կնքված պայմանագրի շրջանակներում ՀԲԸՄ Երևանյան կենտրոնատեղիի Էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի ճարտարապետական նախագծերի կազմում: Կոմունիկացիոն ցանցերի մալուխների տեղափոխման նպատակով ենթակառուցվածքների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների, գազի, մետրոպոլիտենի ցանցերի մալուխների և այլն) տեղափոխման աշխատանքների իրականացում: Էլեկտրաենթակայանի շենքի կառուցման աշխատանքներ, որի համար պայմանագիր է կնքվել «Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ: Հողային աշխատանքներ և ստորգետնյա ավտոկայանատեղիների կառուցում, որը իր մեջ ներառում է Երևանի քաղաքապետարանին պատկանող ավտոկայանատեղիների կառուցում ՀՀ կառավարության համար: Ենթի ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 1,256,129,594 դրամ, Ջեռուցման, օդափոխության, օդաղման համակարգերի սարքավորումների ու սարքերի, ամրանների և ամրալարերի, հակավիբրացիոն ռետինե ծածկերի ու պոլիմերային ժապավենների, վերելակների, այլումինե պրոֆիլների և աքսեսուարների, ապակիների, ջրամեկուսիչ նյութերի, արևային վահանակների, պատի և հատակի կերամիկական սալկների, մետաղական ճաղավաղակների, հատակի պլաստմասե ամրակային մասերի, արհեստական գորգերի, պատի մետաղական ցանցի և ծաղկամանների, հատակ լվացող սարքի ներմուծում՝ 727,340,000 դրամ: Ենթի կառավարման էլեկտրոնային համակարգ, որը ներառում է մուտքի կառավարման համակարգը, ինքնատեսագրման համակարգը, հակահրդեհային համակարգը, համակարգչային և հեռախոսային ցանցերը:	52,200,000 դրամ 65,524,826 դրամ 28,605,920 դրամ 252,399,660 դրամ 1,983,469,594 դրամ 130,000,000 դրամ

		Նախատեսվում է պայմանագիր կնքել «Քելդ Բիլդինգ Սերվիսիզ» ՍՊԸ-ի հետ: - աշխատանքների իրականացում՝ 48,200,000 դրամ, - ապրանքների ներմուծում՝ 81, 800, 000 դրամ:	
		Էլեկտրականության, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անցկացում՝ 186,480,000 դրամ: Ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրականության համակարգերի, սարքերի և սարքավորումների ներմուծում՝ 33,520,000 դրամ:	220,000,000 դրամ
		Շենքի ներքին հարդարման աշխատանքներ՝ 773,000,000 ՀՀ դրամ, - ապրանքների ներմուծում՝ 67,000,000 ՀՀ դրամ:	840,000,000 դրամ
		Ապակյա փաթեթների, պտտվող դռան, ալյուրոնդով երեսպատման, ներքին սալակա պատերի, սալակա բազրիքների և աստիճանավանդակի պատրաստման աշխատանքներ, որի համար կնքվել և մայրատեսվում է կնքել պայմանագրեր «Պրոֆ-Ալ» ՍՊԸ-ի հետ:	160,000,000 դրամ
		Ներքին և արտաքին լուսավորության սարքերի, կախովի առաստաղների և դռների ներկրում	260,000,000 դրամ
		Դահլիճի, ցուցասրահի, հանդիպումների սենյակների և խոհանոցային կահավորանքի ներկրում	140,000,000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն մայրատեսվում	
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ քաղաքաշինության մայրաքաղաքում և Երևանի քաղաքապետարան	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայկական քարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ՀՀ կառավարության քարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով:	

Կազմեց՝

ՀԲԸՄ Հայաստանի ներքին ճեղքային
Շինարարական ծրագրերի մեծի գրասենյակի վարիչ
Քրիստինե Մարտիրոսյան
060- 61-22889



45-2/4-1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2015 թվականի N Մ-154-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄ-
ԲԵՐԻ 24-Ի N Մ-1036-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն


(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 17-ի N 07/80-2/3164-15 և փետրվարի 12-ի N 06/3-3/2757-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2015 թվականի փետրվարի 4-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» N Մ-1036-Ա որոշման 1-ին կետի երկրորդ պարբերությունում «9,748,260 դրամի չափով» բառերը փոխարինել «7,168,718.45 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԻՏ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ

**26 փետրվարի 2015 թվականի N Մ - 155 - Ա
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի փետրվարի 20-ին)
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ
ՄԱՐԶԻ ՍԱՍՈՒՆԻԿ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»,
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 2-ի N 07/80-2/1749-15 և փետրվարի 2-ի N 06/3-3/1664-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի փետրվարի 4-ի N 02/14/745-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հունվարի 30-ի N ՖԲ/ԱՆԲ-4/601-15 ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2015 թվականի փետրվարի 3-ի N 01/14.2/380-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**


1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 15,965,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի մանկապարտեզի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կառված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՍՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի հունվարի 26-ին կնքված N ՀՀ-Կ-01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի մանկապարտեզում՝ 15,965,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արմ Կարդանյան

«25» փետրվարի 2015թ.

«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մասունիկ գյուղի մանկապարտեզի կահավորում»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մասունիկ գյուղի մանկապարտեզը անհրաժեշտ կահույքով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերար (ֆիզիկական և իրավաբանական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արագածոտնի մարզի Մասունիկ գյուղ, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 15.965.500,00 ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մասունիկ գյուղի մանկապարտեզը

2

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ հունվարի 26-ից մինչև 2015թ հունիսի 26-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մույն թվականի հունվարի 26-ից մինչև հունիսի 26-ը ընկած ժամանակահատվածում կահավորել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մասունիկ գյուղի մանկապարտեզը: Արժեքը՝ 15.965.500,00 ՀՀ դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ասպանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ապրանքատեսակների ցանկի /կցվում է/ համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում և անհատույց հանձնում՝ 15.965.500,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզպետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ տարեկան հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**26 փետրվարի 2015 թվականի N Մ - 156 – Ա
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի փետրվարի 20-ին)
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՔԱՐՎԱՃԱՌ ՔԱՂԱՔԻ ՎԻՋԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑԻ, ՎԵՐԻՆ ՇԵՆ, ՆՈՐ ԲՐԱՋՈՒՐ, ՆՈՐ ԳԵՏԱՇԵՆ ԵՎ
ԵՂԵԳՆՈՒՏ ԳՅՈՒՂԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 6-ի N 07/80-2/2208-15 և փետրվարի 5-ի N 06/3-2/2134-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 02/14/855-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:


1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 3,807,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեոնային Ղարաքաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքի Վիլյամ Սարոյանի անվան դպրոցի, Վերին Շեն, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն և Եղեգնոտ գյուղերի դպրոցների կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի հունվարի 26-ին կնքված N ԼՂ-Կ-01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում նշված դպրոցներում՝ 3,807,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաքաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«25» փետրվարի 2015թ.

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքի Վ.Սարոյանի անվան դպրոցի, Վերին Շեն, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն և Եղեգնուտ գյուղերի դպրոցների համակարգչային դասարանների կահավորում»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքի Վ.Սարոյանի անվան դպրոցի, Վերին Շեն, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն և Եղեգնուտ գյուղերի դպրոցների համակարգչային դասարանները անհրաժեշտ կահույքով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	Անհատ բարերար (ֆիզիկական և իրավաբանական անձինք)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լեռնային Ղարաբաղ, կրթության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 3.807.500,00 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքի Վ.Սարոյանի անվան դպրոցը, Վերին Շեն, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն և Եղեգնուտ գյուղերի դպրոցները

2

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ հունվարի 26-ից մինչև 2015թ ապրիլի 26-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2015թ հունվարի 26-ից մինչև 2015թ ապրիլի 26-ը ընկած ժամանակահատվածում վերոնշյալ դպրոցների համակարգչային դասարանների կահավորում 3.807.500,00 դրամ արժեքով
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելվածի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում 3.807.500,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համեմատողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական

Արմինա Դարբինյանը

Ի լրումն մեր 2015 թվականի փետրվարի 24-ի
N 15/15.1/2619-14 ելիցի

3 մարտի 2015թ.

No 15/15.1/3169-15

ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-157-Ա
որոշման 2-րդ կետում «1 տեղ, 14.5 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «2 տուփ,
3 կգ ընդհանուր քաշով» բառերով:



ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ
20 փետրվարի 2015 թվականի N Մ- 157 - Ա

քաղ. երևան

**«ՎԻԵՆԱ ՎԻԺՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԽԱՎԻ
ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԱՆՎՃԱՐ ԱՎՆՈՑՆԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 2-ի N 07/80-2/1774-15 և փետրվարի 4-ի N6/3-3/1893-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի փետրվարի 4-ի N 02/14/742-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի փետրվարի 2-ի N ԱՄ/22.1/832-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի փետրվարի 4-ի N ՖԲ/ԱՆՄ-4/681-15 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի փետրվարի 3-ի N 01/373-15 եզրակացությունները, **ո Ր Շ ՈՒ Մ է** .

1. Բարեգործական որակել «Վիենա Վիժն» բարեգործական հիմնադրամի (ՀՀ, քաղ. Գյումրի, Գարեգին Նժդեհ 5, ՀՎՀՀ՝ 05535163) կողմից իրականացվող՝ 11,690 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Շիրակի մարզի սոցիալապես անապահով խավի տեսողության ստուգում և անվճար ակնոցների տրամադրում» ծրագիրը (ծրագիրը կցվում է):

2. Սահմանել, որ Ավստրիայի քաղաքացի Ռուդոլֆ Մադաքյանի կողմից «Վիենա Վիժն» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված ակնոցների շրջանակները (1 տեղ, 14.5 կգ ընդհանուր քաշով, 11,690 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:


3. «Վիենա Վիժն» բարեգործական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



Ծրագիր

Շիրակի մարզի սոցիալապես անապահով խավի տեսչության ստուգում և անվճար ակտիվների տրամադրում

1.	Ծրագրի նպատակը	Շիրակի մարզի սոցիալապես անապահով խավի և երեխաներին անվճար ակտիվների տրամադրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի բ) ենթակետի՝ մախատեսում ենք ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով մաքսային և հարկային արտոնություններ ստանալ սույն ծրագրի 9-րդ կետում նշված ապրանքների ներմուծման դիմաց
3.	Բարեգործը	Ռուդոլֆ Մադաքյան, Զիվերնգեր Շտրասե, 15/2/2, 1190 Վիեննա, Ավստրիա
4.	Ծրագիրը կատարողը	«Վիեննա Վիժն» Բարեգործական հիմնադրամ ք. Գյումրի, Գարեգին Նժդեհ 5 ՀՎՀՀ՝ 05535163
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Շիրակի մարզ ք. Գյումրի, Գարեգին Նժդեհ 5 «Գյումրու մեր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ, առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 11690 եվրո սույն ծրագրի 8-րդ կետում նշված ժամանակահատվածի համար
7.	Բարեգործություն ստացողը	Շիրակի մարզի սոցիալապես անապահով խմբեր, գոհված ազատամարտիկների ընտանիքի անդամներ և երեխաներ

2

		1. Հաշմանդամներ 1-ին և 2-րդ խմբի՝ առանց տարիքային սահմանափակման 2. Մինչև 18 տարեկան երեխաներ 3. Աղքատության /ընտանեկան/ նպաստի համակարգում ընդգրկված անձիք՝ 32 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցողներ 4. Զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2015 թվականի փետրվարի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, աներաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ա) Օպտիկական շրջանակների ներմուծում 11690 եվրո ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում բ) տեսողության անվճար ստուգում , ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում գ) տեղում ապակիների մշակում անվճար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում դ) անվճար տրամադրում
10.	Զեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և մախատեսվող գինը	ա) Օպտիկական շրջանակների ներմուծում 11690 եվրո բ) տեսողության ստուգում գ) տեղում ապակիների մշակում անվճար դ) անվճար տրամադրում
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի ընթացքում կազմակերպական ծախսեր մախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրն իրականացվելու է մշտական համագործակցությամբ ՀՀ Առողջապահության միջնաբաժանի, ՀՀ Սոցիալական ապահովության միջնաբաժանի, ինչպես նաև Շիրակի մարզպետարանի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացքը վերահսկվում է ծրագիրը ֆինանսավորող կազմակերպության կողմից, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություն է ներկայացվելու ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման համակարգով



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2015 թվականի N Մ- 158 - Ա
քաղ. երևան

«ՀԱՐՄՈՆԻԱ» ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԵՎ
ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ԱԶԱՅՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 10-ի N 07/80-2/2491-15 և փետրվարի 9-ի N 06/5-1/2315-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի փետրվարի 9-ի N ԱՄ/22.2/1192-15 ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2015 թվականի փետրվարի 10-ի N 01/605-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ Հայկական հիմնադրամի կողմից «Հարմոնիա» քաղաքացիական հասարակությանը և հանրային առողջությանը աջակցող հասարակական կազմակերպության հասցեով ստացված մամոգրաֆի (1 տեղ, 790 կգ ընդհանուր քաշով, 82,715 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,690 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը օգտագործվելու է կազմակերպության կողմից անվճար հետազոտություններ կատարելու համար:

2. «Հարմոնիա» քաղաքացիական հասարակությանը և հանրային առողջությանը աջակցող հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2015 թվականի N Մ- 159 -Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1238-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՇԵՆ»
ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 07/80-2/2820-15 և փետրվարի 6-ի N 06/5-1/2720-15, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի փետրվարի 11-ի N ՍԿ/ԳՂ-2/593-15 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի փետրվարի 11-ի N 01/21.1/567-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության ֆինանսավորմամբ ձեռք բերված մեկ տրակտորը (NEXOS 230 VL 4WD մակնիշի, 2,720,000 կգ քաշով, 35,250 եվրո արժեքով, ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «ՇԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն» ծրագրի մասին» N Մ-1238-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում: Բեռը նախատեսված է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Պառավաքարի համայնքային զարգացման համալիրի համար:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2015 թվականի N Մ- 160 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-927-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՅՍՄՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԻ ՖԻԶԻԿԱՅԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 10-ի N 07/80-2/2591-15 և փետրվարի 12-ի N 06/5-1/2794-15 ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի փետրվարի 13-ի N 11.1/1222-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայկական սեյսմոլոգիայի և երկրի ֆիզիկայի ասոցիացիայի կողմից իրականացվող «Արձագանքում սեյսմիկ վտանգին Կովկասում» ծրագրի մասին» N Մ-927-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 10-րդ կետերում «2013 թվական» բառերը փոխարինել «2015 թվականի ապրիլի 30-ը» բառերով:

2. Սահմանել, որ «Հայկական սեյսմոլոգիայի և երկրի ֆիզիկայի ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված CMG-5TDE արժեքները իրենց համալրող միջոցներով (47.50 կգ ընդհանուր քաշով, 23,577.50 եվրո արժեքով, որից փոխադրման և այլ ծախսերը կազմում են 950 եվրո, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են սույն որոշման 1-ի կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2015 թվականի N Մ - 161 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-106-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 10-ի N 07/80-2/2592-14 և փետրվարի 9-ի N 06/3-3/2431-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն-2013» ծրագրի մասին» N Մ-106-Ա որոշմամբ (2014 թվականի մարտի 14-ի N Մ-217-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի 7-րդ կետում «մինչև 2014 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2015 թվականի նոյեմբերի 30-ը» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ի կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վերսուս Ստոդիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00842355) 2015 թվականի փետրվարի 2-ին կնքված N Ծ-01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատրաստել «Ձեռք-ձեռքի» հաղորդաշարի ութ թողարկում՝ 18,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2015 թվականի N Մ - 162 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1059-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՐԵԿԵԾՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 13-ի N 07/80-2/2913-15 և փետրվարի 10-ի N 06/3-3/2456-15 եզրակացությունները, **ո Ր Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարգարառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-1059-Ա որոշմամբ (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 9-րդ կետի 3-րդ, 10-րդ կետի 4-րդ և 4.1 ենթակետերում «80,000,000 դրամ» բառերը փոխարինել «20,000,000 դրամ» բառերով.

2) 9-րդ կետի 4-րդ, 10-րդ կետի 5-րդ և 5.1 ենթակետերում «77,000,000 դրամ» բառերը փոխարինել «137,000,000 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02706151) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Իգիպանել» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04224122) 2015 թվականի փետրվարի 2-ին կնքված N 01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պանելների և պտուտակի մատակարարում՝ 83,965,093 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 փետրվարի 2015 թվականի N Մ- 163 -Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1252-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի փետրվարի 16-ի N 07/80-2/2988-15 և փետրվարի 12-ի N 06/3-3/2750-15 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Կրթավճարներ» ծրագրի մասին» N Մ-1252-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «114,134,000 դրամ» բառերը փոխարինել «114,782,000 դրամ» բառերով.

1) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Փրայստոթերիաուս Կուպերս Սենտրալ Այժա ընդ Կոկասիս Բի.Վի.» ընկերության հայաստանյան մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 02586628) 2014 թվականի նոյեմբերի 25-ին կնքված N 50100214 պայմանագրում (2014 թվականի դեկտեմբերի 29-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2015


թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 5,892,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի



Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2015 թ. իրականացվող կրթավարձային ծրագրերի
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել համրապետության պետական և մասնավոր բարձրագույն հաստատություններում, քոլեջներում ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությունների գծով ուսուցանող, սոցիալապես անապահով և անվճարունակ ուսանողներին՝ կրթավճար և կրթաթոշակ տրամադրելու միջոցով: Վերը նշված կրթական հաստատությունների ցանկը տրվում է սույն ծրագրին կից ցուցակում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և խրախուսում «Բարեգործության մասին» Հայաստանի համրապետության օրենքի 15-րդ հոդված):
